

ԵՐՎԱՆԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ջ.Գ. ԲԱՅՐՈՆԻ ՊՈԵԶԻԱՅԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՀՈՒՆԱ-
ՀՈՒՍԵԱԿԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԱՅԻՆ
ԼԵԶԱՎՇԵՐՏԵՐԸ

Յուրաքանչյուր ազգային լեզվի բառապաշարում հնարավոր է մատնանշել շերտեր, որոնք լեզվի մեջ մուտք են գործել տարբեր ժամանակահատվածներում՝ վաղնջական ժամանակներից մինչև նոր և նորագույն ժամանակները: Նման «ժամանակային» շերտերը, որ կազմում են տվյալ լեզվի բաղադրիչ տարրերը և, միաժամանակ, առանձնահատկությունը, յուրաքանչյուր դարաշրջանում, կախված քաղաքակրթական ընդհանուր մակարդակից և տվյալ դարաշրջանին հատուկ գաղափարագեղագիտական գերիշխող նկրտումներից, սկսում են հանդես գալ տարբեր՝ նորիմաստ դրսևորումներով:

Լեզուն, որպես կազմավորիչ-ձևավորիչ նշանակություն ունեցող իրավություն, առկայացել է տվյալ եթոսի առաջացման ամենամախնական փուլերում, և, այդ առումով, ընկրմված է միֆոլոգիական (=առասպելաբանական) ժամանակների մեջ, երբ ստեղծվում էին միֆերը (=առասպելները), իբրև պատմություններ աստվածների մասին: Որպեսզի պարզ ու հասկանալի լինի սույն հոդվածում արծարծվող թեման, արժե, թեկուզ և համառոտակի, բնութագրել միֆոլոգեմները՝ իբրև լեզվամտածողական արխետիպեր, որոնք հետագա ժամանակներում, գաղափարագեղագիտական-աշխարհայացքային նոր իրավիճակներում (Ջ. Բայրոնի ժամանակ և նրա պոեզիայում) ընկալվել են և կիրառվել արդեն իբրև բուն կամ նախնական միֆոլոգեմային ռեալ բովանդակությունից ու գործառության-կիրառական նշանակությունից զուրկ խորհրդանշական հասկացություններ (=նշաններ) և որպես այդպիսիք գիտակցվում են ու կիրառվում նաև այսօր՝ կազմելով լեզվի (դիցուք, անգլերենի կամ հայերենի) կամ որևէ գրողի բառապաշարի հիմնական միջ շերտերից կամ տարրերից մեկը:

Հետազոտողները գտնում են, որ առասպելը բաղկացած է կառուցվածքային այնպիսի միավորներից, ինչպիսիք են արխետիպային նշանակություն ունեցող միֆոլոգեմները և միֆեմները (առասպելական փոխհարաբերություններ, սյուժեներ, որոնք ձևավորվում են միֆոլոգեմների հիման վրա):¹ Չխորանալով հարցի ուսումնասիրության պատմության մեջ՝ պետք է ասել, որ յուրաքանչյուր լեզու և այդ լեզվով ստեղծագործող յուրաքանչյուր գրող

¹ Տե՛ս Леви-Строс К., Структурная антропология, Москва, 1985, стр. 187-188.

առնչվում է առասպելական, արխետիպային լեզվամտածողության որոշակի շերտերի ու բառապաշարային որոշակի «նստվածքների» հետ: Ընդ որում՝ որքան խորն է տվյալ ստեղծագործողի, այսպես ասած, էքոնմիֆոլոգիական, արխետիպային շերտերի զգացողությունը կամ դրանց ինտուիտիվ-անգիտակցական վերհիշումը, այնքան, ուրեմն, նա մերժ է և հարազատ տվյալ էքոնմիալության հանրությանն ու նրա լեզվամտածողությանը և դրանով իսկ՝ ողջ մարդկությանը: Այդ կարգի ստեղծագործողներ են Գրիգոր Նարեկացին, Յովհ. Թումանյանը, Վ. Տերյանը, Ե. Չարենցը, Վ. Շեքսպիրը, Ջ. Բայրոնը, Դանտեն, Սերվանտեսը, Ֆ. Ռաբլեն² և մյուս մեծերը: Նրանց ստեղծագործություններում ակնհայտ են արխետիպային հնագույն շերտերի «վերհիշումները» և դրանց թարմացումներն ու փոխակերպումները՝ պատմական, ժամանակային, աշխարհաբաղադրական ու մշակութային մոր պայմաններում, գաղափարագեղագիտական մեկ այլ հարթության վրա:

Ինչ վերաբերում է Ջ. Բայրոնին, ապա պետք է ասել, որ նրա ստեղծագործություններում ևս առկա են նշյալ «վերհիշումները»՝ գլխավորապես՝ միֆոլոգեմների կիրառության ձևով: Դրանք հիմնականում վերաբերում են հին հունական և հռոմեական շրջանի առասպելներին (նաև պատմական անցքերին ու իրադարձություններին): Մի ստվար զանգված են կազմում նաև աստվածաշնչային-քրիստոնեական միֆոլոգեմները (եթե կարելի է դրանք այդպես անվանել): Բանն այն է, որ վերջիններս Բայրոնի կողմից կիրառվել են ոչ թե որպես ռեալ իրողության արտահայտիչներ (թեև կան նաև այդպիսի կիրառություններ), այլ հենց միֆոլոգեմներ: Նշյալ երկու՝ հունահռոմեական և աստվածաշնչային լեզվաշերտերի առկայությունը բնորոշ է ոչ միայն Բայրոնին, այլև իր մեծ նախորդին՝ Վ. Շեքսպիրին, Իտալիայում՝ Դանտեին և, առհասարակ, եվրոպական երկրների գրականություններին: Հունահռոմեական առասպելները Բայրոնին գրավել են իրենց պայծառագեղությամբ, նրբին մշակվածությամբ և հուզականությամբ, ինչպես նաև՝ բազմաշանակ սիմվոլիկայով, իսկ Աստվածաշունչը եղել է նրա ամենամավիրական ոգորումների մշտական առանցքը. միայն այն փաստը, որ նա 1817թ. հայերենից անգլերեն է թարգմանել Ս. Պողոս առաքյալի ուղերձները՝ ուղղված կորնթացիներին (անդրանիկը համարվող ուղերձից առաջ), արդեն խոսում է նրա հետաքրքրությունների մասին: Իսկ իր հրատարակչին՝ Ջոն Սերրեին 1821թ. Ռավեննայից գրած նամակը, առավել ցայտուն կերպով է արտահայտում Բայրոնի քրիստոնեական ոգորումները. «Ի՞նչն է պատճառը, որ մի կողմ եք դրել ս. Պողոսի առաքելական թղթերը, որ թարգմանել էի հայերենից... Գուցե վայսենում եք իրատարակել որևէ գործ, որ ներհակ լինի մանիքեության հարցում այդ եռամսյա հանդեսի կեղծավոր կարծիքին: Խնդրում եմ անմիջապես ուղարկել ինձ այդ առաքելական թղթերի արտատիպը: Ես ավելի լավ քրիստոնյա եմ, քան թե Ձեր այդ քարոզիչները, թեև

² Sbu Бахтин В.В., Творчество Франсуа Рабле и народная культура средневековья и Ренессанса, Москва, 1990.

վարձահատույց չեն եղել այդպիսին լինելուս համար»:³ Բայրոնի աստվածաշնչյան ոգորումների մասին են վկայում նաև նրա «Հրեական մեղեդիներ» բանաստեղծական շարքը, «Կայեն» միստերիան և հատկանշական շատ հատվածներ՝ մյուս ստեղծագործություններից, որոնց մասին կիսովի ստորև՝ միֆոլոգեմային լեզվաշերտը քննարկելիս: Որպեսզի առավել հասկանալի լինեն միֆոլոգեմները, իբրև անգլերենի և բայրոնյան բառապաշարի բաղադրատարրեր, արժե, թեկուզև շատ համառոտ, ստորև ցուցադրել որոշ արխետիպային միֆոլոգեմներ՝ հունահռոմեական դիցաբանությունից, Աստվածաշնչից և իսլամիստական պատմական սյուժեներից:

Հունահռոմեական առասպելներից	Աստվածաշնչից	Իսլամիստական սյուժեներից
Քաոս	Ջուր	Ադրյուր
Երկիր (Գեա)	Լույս	Գավազան
Օլիմպոս	Ծառ (Կենաց ծառ)	Լեռ
Նեկտար	Հոգի (Սուրբ Հոգի)	Գիրք
Կայծակ	Լույսի սյուն	Հրեշտակ
Սմարոպ	Սմպ	Ջրհոր
Ծով	Երկինք	Ծառ
Հադես	Լեռ (օր.՝ Սինա լ.)	Թռչուն(ներ)
Լույս (կապված հատկապես Ապոլոնի հետ)	Ծով	Կաթ
Նետ (ոսկեղեն նետ)	Գավազան	Գավաթ
Դափնի	Մանանա	Սեղր
Պիթոն (օձ)	Կրակ	Նշան
Կենտավոս	Լեզու (ներ)	Չեղք
և այլն	Արյուն	Տուն
	Հյուր	Գահ
	Հրեշտակ	և այլն
	Կապան	
	Հաց	
	Գինի	
	և այլն	

Ինչպես տեսնում ենք՝ վերը բերվածները երևույթներ, առարկաներ, իրեր և հասկացություններ ցույց տվող եզրույթներ են, որոնք հունահռոմեական, աստվածաշնչյան ու մուսուլմանական ավանդույթներում համարվել են սուրբ, նշանակալի, անսուրբ (ինչպես, օրինակ, օձը կամ սատանան՝ աստվածաշնչային ավանդույթում), զորավոր և այլն: Թվում է՝ հարկ չկա նշելու, թե մասնավորապես որ տեղերում, սկզնադրյունների որ մասերում են հանդիպում նշյալ միֆոլոգեմները. առանց այդ էլ դրանք տարածված և հանրահայտ հասկացություններ են, ինչպես՝ Օլիմպոսն իբրև աստվածների բնակավայր, ոսկի նետերը՝ իբրև Ապոլոն աստծու նետեր, լույսը և Սուրբ Հոգին՝ իբրև միակ Աստծուն ներհատուկ էականություններ ու արտազեղումներ, գավազանն իբրև Մովսեսին տրված հրաշագործ զորության ցուցիչ և այլն: Այսօրինակ միֆոլո-

³ Բայրոն: Էջեր նամակներից [թրգմ.՝ Ա. Բեքարյանի], Երևան, 1986, էջ 29-30:

գեմները տարբեր լեզուներում շրջանառվում են և իբրև առանձին բառեր, և իբրև բառակապակցություններ, ինչպես, օրինակ, «ոսկի նետեր», «աստվածային նետեր», «աստվածային նեկտար», «երկնային հաց», «երկնային մանանա», «կենաց ծառ», «դրախտային պարտեզ», «սուրբ կրակ», «երկնային փերի», և այլն, և այլն: Այստեղ տեղին է նշել, որ միջոլոգեմները կարող են վերաբերել աստվածային իշխանությանը («աջ», «ձեռք», «մատ», «աթոռ», «հրեշտակների գնդեր» - Աստվածաշնչում, «կայծակ», «ամպրոպ», «օծ», «նետ» - հունահռոմեական դիցաբանությունում, «գավաթ», «գավազան», «կրակ» - իսլամական ավանդություն⁴, վերնային (երկնային) և երկրային «ուղղահայաց» կապին (օրինակ, սանդուղքը՝ Հակոբ Նահապետի երազում), ապաշխարությանը-մաքրագործությանը (ջուրը՝ բոլոր երեք ավանդույթներում՝ և հունահռոմեական, և Աստվածաշնչյան, և իսլամական), Աստծո Որդուն՝ Հիսուս Քրիստոսին (զինի, հաց, խաղողի որթ), Ավետյաց երկրին (կաթ, մեղր), հանդերձյալ աշխարհին («կրակ», «սանդարամետ», «հավիտենական որդ», «դժոխք», «դրախտ», «երկինքներ» - Աստվածաշնչում, «ստվերներ», «մշուշ-մառախուղ», «Հաղես» - հունահռոմեական առասպելներում, «դրախտ», «ոսկի», «մարգարիտ», «բուժիչ ծառեր», «եռման ջուր», «կրակ», «դժոխք» - իսլամում), վերնային էություններին («աստվածներ», «աստվածային սուրհանդակներ», «Աստված», «Ալլահ», հրեշտակներ՝ «Գաբրիել», «Միքայել» և այլն): Բացի վերոնշյալ միջոլոգեմներից՝ առկա են նաև այլ կրոններից՝ գրադաշտականությունից, հինդուիզմից, բուդդիզմից ավանդված միջոլոգեմներ, որոնցից մի քանիսը ևս շրջանառվում են եվրոպական գրողների երկերում: Ջ. Բայրոնի պոեզիայում ևս առկա են նման միջոլոգեմներ, սակայն ավելի սակավ, քան հունահռոմեական, աստվածաշնչյան և իսլամական ավանդույթներից փոխանցվածները: Վերջիններս ի հայտ են գալիս բանաստեղծի հատկապես «արևելյան» գործերում՝ կապված կոլորիտային ու լեզվաոճական որոշակի մարմնավորումներ պահանջող պատմությունների, սյուժեների հետ: Սակայն, ինչպես և շեշտվեց, Բայրոնի պոեզիայի հիմնարար բառաշերտը հունահռոմեական և աստվածաշնչային՝ Նորկտակարանային ու Հինկտակարանային միջոլոգեմներն են՝ *այն նվազագույն միավորները, որոնք միջանկյալ դիրք են զրափում առասպելի (միֆի) և միֆեմի միջև՝ այն առումով, որ միջոլոգեմների միջոցով է կառուցվում ողջ միֆը և միջոլոգեմներով են պայմանավորվում միֆեմների՝ իբրև կառուցողական միավորների (միֆը կառուցող միավորների) շարժումները կամ փոխհարաբերությունները՝ ըստ առասպելի (=ըստ առասպելական տվյալ պատմության):*

Բայրոնի պոեզիայում միջոլոգեմների առկայությունը (և առատությունը) կարելի է բացատրել երկու կարևորագույն հանգամանքներով. առաջինը՝

⁴ Շատ միջոլոգեմներ իսլամը վերցրել է Հինկտակարանյան և Նորկտակարանյան գրքերից, ինչպես նաև բանավոր փոխանցված սրբազան ավանդությունից:

բանաստեղծի նախասիրությամբ, այն առումով, որ նրա աշխարհագրողության
և լեզվամտածողության ողջ համակարգը ներթափանցված է հունահռոմեական
առասպելներից ավանդված միֆոլոգեմներով: Պոեզիայում՝ առհասարակ, և
մասնավորաբար՝ Բայրոնի պոեզիայում միֆոլոգեմների առկայության մյուս
պատճառը, թերևս, հնարավոր է բացատրել առասպելի (միֆի) «ամժամանա-
կայնության» տեսությամբ, որի համաձայն ներկան, այսօրը առասպելական
անցյալի նորագյուտ բացահայտումներից մեկն է, և առասպելական անցյալը ոչ
թե սոսկ անցած-գնացած կամ անցողիկ մի բան է, այլ՝ համաժամանակյա և
մշտական մի գործընթաց, որն իր բանաստեղծական դրսևորումներն է ունեցել
տարբեր բանաստեղծների, այդ թվում նաև Բայրոնի ստեղծագործություն-
ներում. ուստի հետագա բանաստեղծական դրսևորումները ևս, եթե դրանք
ճշմարիտ դրսևորումներ են, լինելու են այդ նույն համաժամանակյա առասպելի
բացահայտումները՝ ժամանակի մեջ:⁵ Հունահռոմեական առասպելներից ու
Աստվածաշնչից ավանդված միֆոլոգեմները, (լեզվական մակարդակի վրա
դրանք կարող են համարվել կայուն կամ ազատ բառակապակցություններ)
կազմում են բանաստեղծի լեզվամտածողության և պոեզիայի բառապաշարի մի
զգալի զանգվածը: Կայուն բառակապակցությունները ունեն համեմատաբար
ուղղակի իմաստներ, ինչպես օրինակ, «չքնաղ մուսա», «դուստր ոսկեհեր»
կապակցությունները՝ «Չայլո Զարոլդի ուխտագնացությունը» պոեմի առաջին
նվագի 1-ին իննյակում.

Ո՛վ չքնաղ մուսա, երկնային ծնունդ,
Հույն երգիչների դուստր ոսկեհեր...⁶

Oh! thou! in Hellas deemed of
heavenly birth,
Muse! formed or fabied at the
Minstrel's will!⁷

Նշյալները կայուն բառակապակցություններ են. միֆոլոգեմը (մուսա)
իր մակդիրի (չքնաղ) հետ, և մեկ միասնական կայուն բառակապակցություն
կազմող «դուստր ոսկեհեր» միֆոլոգեմը, որը փաստորեն «մուսա»-ի մեկ այլ
անվանումն է (փոխանունություն): Առաջին դեպքում միֆոլոգեմը (մուսա)
կարող է հանդես գալ նաև միայնակ, իսկ երկրորդը՝ ոչ, քանի որ «դուստր»-ը
միայն «ոսկեհեր» մակդիրով է, որ հիշեցնում է Ձևաի և Մենեոսիների՝ հիշողու-
թյան աստվածուհու դուստրերին՝ Ապոլոնի ուղեկից ինը մուսաներին կամ
նրանցից որևէ մեկին՝ Կալիոպեին, Էվտերպեին կամ Էրատոնին... Եթե առաջինը

⁵ Ств Гуревич А.Я., Категории средневековой культуры, Москва, 1972, стр. 87-88.

⁶ Բայրոն, Երկերի ժողովածու [կազմ.՝ Վ. Ջևորգյան և Ռ. Իշխանյան], Երևան, 1965, էջ 101 [այսուհետև տեքստում տրվում է նույն հրատարակության նվազը, իննյակը կամ ութնյակը և էջը]:

⁷ Byron G.G., Childe Harold's Pilgrimage [Canto the first, p. 47], Moscow, 1956 [այսուհետև տեքստում՝ նույն հրատարակության նվազը, իննյակը և էջը]:

(«չքնաղ մուսա») կարող է հասկացվել նաև համատեքստից դուրս և այն էլ՝ ուղղակի՝ «մուսա» իմաստով, ապա երկրորդը հասկացվում է միայն ամբողջական բանաստեղծական տողի («Հույն երգիչների դուստր ոսկեհեր») կառուցվածքում: Հնարավոր է հաստատապես ասել, որ առաջինը կայուն կապակցություն է և որպես այդպիսին փոխանցվել է ժամանակի ընթացքում, կիրառվել պոեզիայում և արձակում, ինչպես նաև ունեցել իր գեղանկարչական ու քանդակային մարմնավորումները: Երկրորդ կապակցությունը՝ «ոսկեհեր» մակդիրով և «հույն երգիչների» հատկացուցիչով, ինչպես ասվեց, փոխանունություն է (թեև կարող է, մեկ այլ դիտանկյունից, համարվել նաև շրջասություն՝ պերիֆրազ): Բոլոր դեպքերում՝ այն այլաբերության (տրոպ) տեսակ է և մեր համոզմամբ՝ փոխանունություն (մետոնիմիա), որը կազմվել է շրջասությամբ: Բայրոնի պոեզիայում հանդիպող կայուն կամ ազատ կապակցությունները⁸, կարելի է ասել, կազմում են երկու շերտ. կապակցություններ, որ կայուն են և չունեն այլաբանական իմաստ (կամ գիտակցվում են որպես այդպիսիք), և կապակցություններ, որ ունեն այլաբանական իմաստ և որպես այդպիսիք փոխանունություններ են կամ փոխաբերություններ, որոնք էլ, իրենց հերթին, դարձվածքային միավորներ կազմող միջոցներ են: Ինչպես ճշգրիտ կերպով նշում է Ե. Գևորգյանը՝ «Լեզուներում դարձվածքները ձևավորվում են այլևայլ ոճական հնարների միջոցով: Հայերենում այդպիսի ոճական հնարներ են փոխաբերությունը, չափազանցումը, շրջասությունը, փոխանունությունը և համեմատությունը»:⁹ Ասվածին պետք է հավելել, որ անգլերենում ևս դարձվածքները կազմվում են նման ոճական հնարների միջոցով: Ինչ վերաբերում է չափազանցումին (հիպերբոլ) կամ շրջասությանը (պերիֆրազ), ապա պիտի ասել, որ չափազանցումը կամ փոքրացումը (լիտոտա) փոխաբերություն, փոխանունություն և համեմատություն ստեղծելու միջոցներ են կամ եղանակներ:

Ահա հունահռոմեական առասպելներից և Աստվածաշնչից ավանդված որոշ միֆոլոգեմներ (լեզվական՝ ձևաբանաշարահյուսական մակարդակի վրա՝ կայուն բառեր ու բառակապակցություններ), որոնք կիրառել է Ջ. Բայրոնն իր պոեզիայում: Օրինակները տրվում են «Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը» պոեմից.

1. Պաթոսի¹⁰ դուստրոն երգում են, խնդում... (I – 7, էջ 103)

Now Paphian girls were known

To sing and smile...

(I – VII, p. 49)

2. Շինեցիր. Վատեկ, գրախտ ոսկեհուր...

(I – 22, էջ 111)

⁸ Դրանց մասին տես՝ Խաչատուրյան Լ.Ս., Խոսքիմասային տարարժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում, Երևան, 1996:

⁹ Գևորգյան Ե.Հ., Հայերենի դարձվածքները, Երևան, 1969, էջ 47:

¹⁰ Ըստ երևույթին պետք է թարգմանվեր Պենթևս, քանի որ ըստ Եվրիպիդեսի «Բաքոսուհիներ» ողբերգության (այն ողբերգության, որը, Պլուտարքոսի հաղորդմամբ, մ.թ.ա. 53թ., Արտավազդ II-ի օրոք բեմականացվել է հայոց Արտաշատ մայրաքաղաքում)՝ Պենթևսի մայրն ու նրա երկու քույրերը գլխավորել են Թեբեի կամանց բաքոսական պարերը:

- There thou too, Watek! England's
Wealthiest son,
Once formed thy Paradise, as not aware... (I – XXII, p. 57)
3. Թող կանայ դաւինին, խոցված սրտերն հեզ
Դառնան մեծ պարզև զինվորին ընկած... (I – 43, էջ 118)
- Peace to the perished! may the warrior's meed
And tears of triumph their
reward prolong! (I – XLIII, p. 64)
4. Մինեովաի հետ քայլում է անահ,
Ա՛խ, այդ վայրերով Սարսն էլ չէր գնա... (I – 54, էջ 121)
- Stalks with Minerva's ster
where Mars might quake
to tread. (I – LIV, p. 68)
5. Ֆեբն ուզեց նրա այտերը այրել... (I – 58, էջ 123)
- Hath Phoebus wooed in vain to
spoil her cheek... (I – LVIII, p. 69)
6. Այստեղ է չքնաղ դրախտն երանյազ,
Յրեշտակներ կան այստեղ սրարբած: (I – 59, էջ 123)
- There your wise Prophet's Paradise we find,
His black-eyed maids of Heaven, angelically kind. (I – LIX, p. 69)

Ընդգծյալները Աստվածաշնչից (նաև բանավոր՝ սրբազան ավանդու-
թյուններից) ավանդված միֆոլոգեմներ են՝ կայուն հասկացություններ կամ
բառակապակցություններ (ինչպիսիք են՝ «դրախտն երանյազ», «իրեշտակներ
սրարբած»), որոնք կազմում են անգլերենի (և Բայրոնի պոեզիայի), ինչպես նաև
հայերենի (և հայ բանաստեղծության) բառապաշարի հիմնական շերտերից
մեկը և որպես այդպիսիք կարող են դառնալ հատուկ հետազոտության
առարկա: